ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 սեպտեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

131
(2981)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀՈՒՄ ԽԾԲ-ՈՎ

Խնամի-ծանոթ-բարեկամ կապով իշխանությունը պահող Նիկոլ Փաշինյանը, քրոջ աղջկան պետական համակարգում տեղավորելուց եւ հեռացնելուց հետո, անցավ քրոջ փեսային:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից պարզեց, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի քրոջ դուստրը՝ Ռոնա Ահարոնյանը, մինչեւ վերջերս ՀՀ ֆինանսների նախարարի մամուլի քարտուղարն էր, ով ազատվեց պաշտոնից հուլիս ամսին՝ սեփական դիմումի համաձայն:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց նաեւ, որ Նիկոլ Փաշինյանը, իր քրոջ աղջկանից բացի, 2022 թվականին պաշտոնի է նշանակել նաեւ նրա ամուսնուն՝ Վլադիմիր Հովհաննիսյանին:

Վերջինս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քաղաքացիական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարն է արդեն երկու տարի: Մինչ այս պաշտոնին նշանակվելը Վլադիմիր Հովհաննիսյանը ՄԻՊ գրասենյակում հասարակ մասնագետի պաշտոնով է աշխատել, ապա դարձել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գլխավոր քարտուղարի տեղակալ:

Կինը եւ ամուսինը պաշտոնավարմանը զուգահեռ երկու տարում համատեղ սեփականությամբ երկու բնակարան են ձեռք բերել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում:

Բնակարաններից մեկի հիփոթեքի մայր գումարի մնացորդը 2024 թվականին կազմել է 14 մլն 459 հազար դրամ:

Սա հերթական ապացույցներից է, որ Նիկոլ Փաշինյանը ոչ մի անօրեն բան չի մերժում եւ ջուր է լցնում հակաօրինականության ջաղացին:



Փաշինյանը փորձ է անում փրկել ընտանիքին՝ կասկածելի քայլեր անելով: ArmLur.am-ը դեռ հունիսին էր արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանի՝ ՀՀ վարչապետի անձնական տվյալները հեռացված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի ՀՀ ընտրողների ռեգիստրից: Հետո պարզեցինք, որ ընտանիքի անդամները եւս չկան ՀՀ ընտրողների ռեգիստրում: «Ժողովուրդ» օրաթերթը հետեւողականորեն ուսումնասիրեց եւ նկատեց, որ այժմ Նիկոլ Փաշինյանը վերադարձել է հայրական տուն, եւ հիմա նրա բնակության հասցեն Տավուշի մարզի Իջեւան համայնքի Ենոքավան, առաջին փողոց բնակարան 9-ն է: Նրա հետ համատեղ բնակվում են 2 անձինք՝ Նիկոլ Փաշինյանին տարեկից Չիբուխչյան Վարդուհին եւ 1965 թվականին ծնված Փաշինյան Շողերը: Հարկ է նշել, որ Փաշինյանի ընտանիքի չափահաս անդամների տվյալները եւս բացակայում են ՀՀ ընտրողների պետական ռեգիստրից: Թե ինչու են են այդպես մեկուսի ապրում իշխանությունները, պարզ չէ, սակայն փաստ է, որ Փաշինյանը ինչ-որ բանից փրկել կամ ապահովագրել է ընտանիքին:

Ենթակառուցվածքներ են փլուզվում, բայց ՔՊ առաջնորդը անհոգ է եւ երջանիկ: «Ժողովուրդ» օրաթերթը անդրադարձել էր 2022 թվականի համեմատ 2023 թվականի ցուցանիշներով ՀՀ տնտեսական որոշ «հսկաների» շահույթի գահավիժմանը: Հերթական օրինակը առավել քան մտահոգիչ է, քանզի 8 անգամ կամ 800 տոկոս շահույթի նվազումը հավասարազոր է տնտեսական փլուզման, հատկապես, որ Երեւանի կենտրոնում գտնվող թանկարժեք «Ալեքսանդր հոթելը», առանց չափազանցության, կարելի է անվանել մայրաքաղաքի դեմքը, որտեղ հանգրվանում են նախագահներ, բարձրաստիճան եւ բարձրաշխարհիկ հյուրեր: Հերթով խորտակվում են հեղափոխության անուրջները եւ հեքիաթները ներդրումների հոսքի մասին՝ եթե «մերժեք Սերժին»: Համաձայն ներկայացվող փաստաթղթի՝ (տե՛ս ArmLur.am կայքում) «Ալեքսանդր հոթել» ՍՊԸ-ի՝ 2023 թվականի շահույթը 83.9 միլիոն դրամ է, դրա նախորդ տարում 697.6 միլիոն դրամ է եղել: Հիշեցնենք՝ «Ալեքսանդր» հյուրանոցը պատկանում է «Մոնարխ» ընկերությանը, որի սեփականատերն է Ռուսաստանում բնակվող հայ գործարար, մեծահարուստ Սերգեյ Համբարձումյանը:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն իր խոսքում բազմաթիվ անգամներ թիրախավորել է կին գործիչներին եւ կիրառել է անթույլատրելի որակումներ, որոնք պարունակում են սեքսիզմի ակնհայտ դրսեւորումներ: Այսինքն՝ վերջինս քննադատում է կին ընդդիմադիր գործիչներին՝ հատուկ թիրախավորելով կամ ակնարկելով նրանց սեռական պատկանելությունը: Խոսենք փաստերով: Նախ, երեկ նա տգեղ բառապաշարով վիրավորեց Արցախի ԱԺ պատգամավոր Մետաքսե Հակոբյանին: Երբ Եռաբլուրից հեռանալիս Մետաքսե Հակոբյանը ՔՊ-ականների ուղղությամբ բացականչեց՝ «Հարգանքի տուրքը ստացվեց, էլի. մադասպաննե՛ր», Ալեն Սիմոնյանն իրեն բնորոշ սանձարձակ պահվածքով արձագանքեց արցախցի պատգամավորին՝ «Ձիբիլի վրայի կատվին տարե՛ք էստեղից»: Եվ սա առաջին անգամը չէ, որ նա նման պահվածք է ցուցաբերում կին գործիչների նկատմամբ: Դեռ նախորդ տարի՝ ԱԺ նիստերից մեկի ժամանակ, հենց նախագահությունից Ալեն Սիմոնյանը ԱԺ նախագահին անհարիր բառերի մի շարան էր հնչեցրել «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Աննա Մկրտչյանի հասցեին: Ընդդիմադիր կին պատգամավորի սուր ելույթին Ալեն Սիմոնյանը արձագանքել էր՝ «Տխմարը դու ես, ա՛յ չինական...»: Իսկ երբ Աննա Մկրտչյանը, ի պատասխան Ալեն Սիմոնյանի վիրավորանքների, հեգնեց, թե կարող է անվտանգության աշխատակիցների կանչել, Սիմոնյանն արձագանքել էր՝ «...Որ գրկի»: ՌԴ ԱԳՆ խոսնակ Մարիա Զախարովան եւս անմասն չէր մնացել Ալեն Սիմոնյանի թիրախավորումներից: Հայաստանի ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Զախարովային անվանել էր «ինչ-որ քարտուղարուհի»: «Չեմ պատրաստվում պատասխանել ինչ-որ գերատեսչության քարտուղարուհու, կարծում եմ՝ դա իմ մակարդակը չէ», - ասել էր Սիմոնյանը: Այսինքն՝ Ալեն Սիմոնյանը, ով վերամբարձ խոսում է հանդուրժողականության մասին, իր խոսքում նպատակադրված թիրախավորում է կին ընդդիմադիր գործիչներին՝ ովքեր ՔՊ-ական չեն եւ քննադատում են իշխանություններին:

ԶՐՈՒՅՑ

ԱՐՑԱԽԸ ՎԱՂ ԹԵ ՈՒՇ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ

Երեկ լրացավ Արցախի դեմ Ադրբեջանի հարձակման եւ Արցախյան 44-օրյա պատերազմի մեկնարկի 4-րդ տարելիցը:

Այդ կապակցությամբ «Եռաբլուր» զինվորական պանթեոն էին այցելել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, փոխվարչապետ Մհեր Գրիգորյանը, ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, Գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանը, բազմաթիվ զինվորականներ, նախարարներ ու ՔՊ-ական պատգամավորներ:

Այնտեղ էին նաեւ Արցախի նախագահ Սամվել Շահրամանյանը, ԱԺ նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Բաղունցը եւ այլ պատգամավորներ:

«Ժողովուրդ» օրաթերթը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում զրուցել է ԱԺ նախագահի պարտականությունները կատարող Գագիկ Բաղունցի հետ:

-Պարոն Բաղունց, 44-օրյա պատերազմի մեկնարկից արդեն չորս տարի է անցել եւ Հայաստանի Հանրապետության իշխանություններն Արցախի հարցը փակված են համարում: Նիկոլ Փաշինյանն ասում է, որ արցախցիների հետ վերադարձն իրատեսական չէ, հակառակ, որ տեսնում ենք, որ միջազգային տարբեր կազմակերպություններ, պետություններ, այդ թվում՝ Ամերիկայի Միացյալ Նահանգները, շեշտում են, որ արցախի ժողովրդի հայրենիք վերադարձը կարեւոր է: Ինչ դիտարկումներ ունեք այս մասով Հայաստանի Հանրապետության իշխանությունների վարած քաղաքականության վերաբերյալ:

-Արցախի ժողովուրդը եւ Արցախի ընտրված իշխանությունները, արցախահայության ներկայացուցիչները հստակ են իրենց վճռականության հարցում: Ինչքան էլ տարբեր քաղաքական ուժեր եւ իշխանություններ փորձեն պնդել, որ Արցախի հարցն այլեւս գոյություն չունի ու Արցախի էջը փակված է, դա դժվար թե ազդի մեր տրամադրվածության, ցանկության եւ կամքի վրա՝ մեր պատմական հայրենիք հավաքական վերադարձի հարցում:

Նկատի առնելով բոլոր սպառնալիքները՝ թե՛ արտաքին, եւ թե՛ ներքին, այնուամենայնիվ, առավել եւս նման օրերին, մեր վճռականությունն ենք արտահայտում եւ անելու ենք ամեն բան՝ վաղ, թե ուշ մեր պատմական հայրենիք հավաքական վերադարձի համար: Արցախը պետք է հայկական լինի:

-Պարոն Բաղունց, եթե միայն Հայաստանի Հանրապետության իշխանություններն ունեն պաշտոնապես միջազգային հարթակներում բանակցություններ վարելու մանդատ, սակայն խուսափում են անգամ Արցախ բառը հնչեցնելուց եւ ասում են Լեռնային Ղարաբաղ, ապա ինչպես եք վերադարձը հնարավոր համարում:

-Ժողովրդի կամքը ամենաբարձր մակարդակի մանդատն է, իսկ արցախահայությունն ամբողջությամբ տրամադրված է իր պատմական հայրենիք վերադառնալուն: Այլ մանդատ ես չգիտեմ, որը առավել է դրանից:

-Այսօր նաեւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարությունն է Բաքվի բանտերում գտնվում: Բաքուն նշում է, որ նրանց վերադարձնելու որեւէ պարտավորություն չունի, իսկ Նիկոլ Փաշինյանն իր վերջին ասուլիսի ընթացքում նշում էր, թե հարց է՝ ով է Ռուբեն Վարդանյանին ուղարկել Արցախ եւ առհասարակ գերիների վերադարձի հետ կապված որեւէ մտադրություն չի արտահայտում:

-Հստակ եւ ընդգծված է, որ նման մտադրություն չկա Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից: Այնուամենայնիվ, մենք մեր բոլոր հնարավորություններն օգտագործում ենք, որ այդ հարցն օրակարգում մնա եւ ապօրինի պահվող ռազմաքաղաքական ղեկավարությունն ու մեծ թվով ռազմագերիներ հնարավորինս շուտ վերադառնան իրենց հայրենիք:

Զրուցեց ԲՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԲԱԳՐԱՏ ՍՐԲԱԶԱՆ

«ՉԵՄ ՆԵՐԵԼՈՒ ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ»

«Չեմ մոռանալու հանուն Հայաստանի, չեմ ներելու հանուն Արցախի». այս մասին 44-օրյա պատերազմի տարելիցի կապակցությամբ իր ուղերձում ասել է Բագրատ Սրբազանը:

«4 տարի առաջ այսօրը՝ սեպտեմբերի 27-ին, Ադրբեջանը Թուրքիայի հովանավորությամբ ու աջակցությամբ սանձազերծեց հերթական պատերազմը:

Այս պահին ես աղոթում եմ մեր նահատակ որդիների ու դուստրերի հոգիների խաղաղության համար եւ խոնարհումս նրանց ու նրանց ընտանիքների առջեւ: 2020 թվականին հայրենական մեծ պատերազմում մարտի ելան հայոց քաջարի գնդերը՝առանց կասկած ունենալու, որ պատերազմի ելքն արդեն իսկ կանխորոշված էր, քանզի պատերազմի առաջին օրն իսկ ՀՀ վարչապետի աթոռը զբաղեցնողը հայտարարեց՝ եկեք պայմանավորվենք, որ ինչ էլ լինի, մենք մեզ պարտված չենք համարելու: Ասաց եւ արեց: Պետությանը պարտության մատնելով՝ինքն իրեն անպարտ կարգելով: Միջազգային իրավունքով արգելված զենքերի կիրառմամբ, ահաբեկիչների ներգրավումով, անմարդկային գազանություններով եւ մարդասիրական իրավունքի հանրաճանաչ չափանիշները խախտելով Բաքվին հաջողվեց գրավել Արցախի զգալի մասը: Միջազգային հանրությունը, չհաշված առանձին բացառություններ, լուռ հետեւում էր կատարվողին: 44-օրյա պատերազմի պայմանական ավարտով եւ ստորագրված նոյեմբերի 9-ի ամոթի եւ խայտառակության հայտարարությամբ, ցավոք, իրական պատերազմը չի դադարել: Մենք դրա շարունակության դրսեւորումները տեսանք Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ զավթիչ գործողություններով, Արցախի շրջափակմամբ, 2023 թվականի սեպտեմբերի 19-ի պատերազմով ու դրան հաջորդած Արցախի հայաթափմամբ: Դժբախտաբար, հայության դեմ սանձազերծված թուրք-ադրբեջանական ագրեսիան, օգտվելով անպատժելիության եւ ամենաթողության մթնոլորտից, իր ամենատարբեր դրսեւորումներով շարունակվում է նաեւ այսօր՝չնայած խաղաղության մասին պարբերաբար հնչող թեզերին ու խոսքերին:

Առ այսօր Ադրբեջանը հրաժարվում է վերադարձնել մեր գերիներին եւ Արցախի պատանդառված ռազմաքաղաքական ղեկավարությանը: 44 օր տեւած պատերազմի, դրան նախորդող փուլի, պատերազմի ընթացքում, ապա նաեւ հաջորդող շրջանում Հայաստանի իշխանությունների արած քայլերի, ընդունուած որոշումների, ձեռք բերած պայմանավորվածությունների ու դրանց հետեւանքների իրական գնահատականը կտա վաղվա Հայաստանը՝ խորը եւ անաչառ իրավական քննության արդյունքում, բոլոր մեղավորներին օրենքի ողջ խստությամբ պատժելու ճանապարհով: Սակայն այսօր իսկ արդեն միանշանակ եւ առավել քան հիմնավոր կարելի է փաստել, որ այս իշխանությունը չի իրականացրել անվտանգության ապահովման իր գործառույթը՝ ոչ պատերազմից առաջ, ոչ պատերազմի ընթացքում, եւ ոչ էլ դրանից հետո: Ամբողջությամբ ձախողել է եւ անվտանգային, եւ արտաքին քաղաքականությունը:

Վաղվա Հայաստանը կտա նաեւ իրական խաղաղության օրակարգը, որը որեւէ կերպ այսօրվա պարտված իշխանությունների քարոզած ամեն գնով մուրացիկ խաղաղությունը չէ, այլ հավասարակշռության վրա կառուցված խաղաղություն է, որը կլինի արդար, կայուն եւ երկարաժամկետ:

Հետեւաբար, քանի դեռ Հայաստանում շարունակում են իշխանության մնալ ամեն ինչ զիջելու պատրաստ, պարտված ու անգամ մարդասիրական խնդիրները, գերիների վերադարձի հարցը բարձրաձայնելու, լուծելու կարողություն չունեցող իշխանությունները, քանի դեռ իշխանությունը զավթել են ՀՀ-ի ազգային, պետական շահերի հետ ոչ մի առնչություն չունեցողները, 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված աղետը շարունակվում եւ շարունակվելու է իր տարաբնույթ դրսեւորումներով:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ՈՂՐ 3 ԿԵՏԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՉԵՆ

44-օրյա պատերազմի 4-րդ տարելիցին ադրբեջանական լրատվամիջոցները ներկայացրել են եռակողմ կապիտուլացիոն համաձայնագրի կետերին՝ ընդգծելով, թե որ կետերի շուրջ են բանակցություններն անավարտ:

«Սկզբում Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ հաշտության պայմանագրի տարբերակում կար 33 կետ, հետո՝ 30, հետո բանակցություններից հետո՝ 17, հետո Ադրբեջանը հրաժարվեց Զանգեզուրի միջանցքի հետ կապված կետից եւ ընդհանուր միավորը դարձավ 16: Դրանցից 13-ը համաձայնեցված են, իսկ 3-ը՝ոչ. Հայկական կողմի մերժած այս 3 կետերն են, որ հիմք են հանդիսանում Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կայուն խաղաղության եւ համապարփակ երկկողմ հարաբերությունների համար:

Փաստն այն է, որ կետերից առաջինը վերաբերում է անվտանգության խնդիրներին, երկրորդը՝ Հայաստանի սահմանադրությանը, այսինքն՝ հայկական պետականության իրավական ասպեկտներին, որտեղ իրականում առկա է ապագայում խաղաղության պայմանագիրը չեղյալ հայտարարելու սպառնալիք, եւ երրորդ՝ ԵԱՀԿ Մինսկի խմբում լինելը: Այս կետերը նախագծից ուղղակի բացառելը շատ անլուրջ քայլ էր, քանի որ Համաձայնեցված բոլոր կետերից միայն այս երեքն են Բաքվի համար սկզբունքային նշանակություն, այդ մասին մշտապես ասել է Ադրբեջանի նախագահը»,- գրում են ադրբեջանական ԶԼՄ-ները:

4 ՏԱՐԻ ԱՆՑ ԴԵՌ ԶՈՀԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՉԵՆ

ՀՀ ԱԺ պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահի պաշտոնից ապօրինաբար հեռացված, անկուսակցական պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «4 տարի առաջ հենց այս օրը Ադրբեջանը սանձազերծեց իր ագրեսիան Արցախի Հանրապետության դեմ:

Պատերազմ, որի արդյունքում մեր ժողովուրդը կրեց անդառնալի մարդկային եւ տարածքային կորուստներ (4000-ից ավելի զոհ ու տասնյակ հազար քառակուսի կիլոմետր կազմած տարածքային կորուստ):

Այս պատերազմը ցույց տվեց Նիկոլ Փաշինյանի իշխանության ապիկարությունն ու ձախողված դիվանագիտությունը:

4 տարի անց մենք դեռ ապրում ենք հետեւանքներով՝ առանց համոզիչ գործողությունների, պատասխանատուներին պատժելու եւ մեր երկրի անվտանգությունն ու ապագան երաշխավորելու ուղղությամբ:

4 տարի անց դեռ պաշտոնապես հրապարակված չեն զոհվածների անունները:

4 տարի անց անհետ կորածների եւ զոհերի աճյունների որոնողական աշխատանքները դադարեցված են:

4 տարի անց դեռ 8 տասնյակից ավելի մասունքներ դիահերձարաններում են...

Բայց կարեւորը՝ՔՊ-ի համար «ապագա կա»»:

ԶԵՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿՈՉ

Պաղեստինի նախագահ Մահմուդ Աբասը, ելույթ ունենալով Նյու Յորքում ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ամբիոնից, կոչ է արել դադարեցնել զենքի մատակարարումները Իսրայելին եւ պատժամիջոցներ սահմանել նրա դեմ Գազայի հատվածում գործողությունների համար:

«Դադարեցրեք ցեղասպանությունը, դադարեցրեք զենք մատակարարել Իսրայելին: Այս խելագարությունը չի կարող շարունակվել»,- ասել է նա Գլխավոր ասամբլեայի 79-րդ նստաշրջանի ընդհանուր քաղաքական քննարկման ժամանակ:

Այնուհետեւ նա հավելել է.

«Ամբողջ աշխարհը պատասխանատու է այն ամենի համար, ինչ կատարվում է մեր ժողովրդի հետ Գազայում եւ Հորդանան գետի Արեւմտյան ափում: Եթե Իսրայելը կարծում է, որ կարող է խուսափել պատասխանատվությունից եւ պատժից այս հանցագործությունների համար, ապա նա սխալվում է»:

Նա համոզմունք է հայտնել, որ «իսրայելցի զինվորականների կողմից պաղեստինյան ժողովրդի դեմ կատարած հանցագործություններն անպատիժ չեն մնա»:

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԵՆՔ

Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն բացատրել է, թե որ դեպքում կարող է միջուկային զենք օգտագործվել Բելառուսի եւ Ռուսաստանի պաշտպանության համար:

«Ես ֆորումում ասացի, որ Բելառուսի վրա հարձակումը կվերածվի երրորդ համաշխարհային պատերազմի: Պուտինը վերջերս հաստատեց դա՝ փոփոխելով միջուկային դոկտրինը եւ ամրագրելով, որ Ռուսաստանի եւ Բելառուսի վրա հարձակման դեպքում, մենք միջուկային զենք ենք օգտագործելու: Նա հաստատեց իմ խոսքերը, սա էր իմ հայտարարության էությունը:

Հենց հարձակվեն, մենք միջուկային զենք ենք օգտագործելու, Ռուսաստանը եւս խառնվելու է մեզ համար: Եթե օգտագործենք միջուկային զենք, մեզ կարող են պատասխանել, կարող են նաեւ ՌԴ-ին հարվածել, իսկ այդ դեպքում ՌԴ-ն կօգտագործի իր ողջ զինանոցը: Իսկ սա արդեն համաշխարհային պատերազմ է»,- ասել է Բելառուսի նախագահը:

ՎՐԱՍՏԱՆԸ ԿՎԵՐԱՆԱՅԻ ԱՄՆ-Ի ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վրաստանը կվերանայի ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունները, եթե Վաշինգտոնը չփոխի իր քաղաքականությունը Թբիլիսիի նկատմամբ: Այս մասին, ՏԱՍՍ-ի փոխանցմամբ, լրագրողներին հայտարարել է Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն:

«Մենք ասում ենք, որ հարաբերությունները (Վրաստանը եւ ԱՄՆ-ը) չպետք է այսպես շարունակվեն, այլապես մենք ստիպված կլինենք վերանայել գոյություն ունեցող ստատուս քվոն: Սա մեր հստակ դիրքորոշումն է: Ամեն ինչ կախված է ամերիկյան կողմից», - ասել է Կոբախիձեն:

1 ՏԱՐԻ՝ ԲԱՔՎԻ ԲԱՆՏՈՒՄ

ՄԵԿ ՏԱՐԻ ԱՌԱՋ ՉԵՐԲԱԿԱԼՎԵՑ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Երեկ լրացավ է մեկ տարին, ինչ Ադրբեջանի իշխանությունները կամայականորեն կալանավորեցին հայտնի գործարար եւ մարդասեր Ռուբեն Վարդանյանին: Նրա ձերբակալությանը հաջորդեցին արցախցի մյուս գործիչների՝ Արցախի Հանրապետության նախկին նախագահներ Արկադի Ղուկասյանի, Բակո Սահակյանի, Արայիկ Հարությունյանի, ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանի, նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանի, Արցախի Պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանի, հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանի ձերբակալությունները:

«Հորս կամայական ազատազրկումը՝ առանց որեւէ ապացույցի կամ արդար դատաքննության, միջազգային բոլոր նորմերի եւ օրենքների բացահայտ խախտում է,- ասել է Ռուբեն Վարդանյանի որդին՝ Դավիթ Վարդանյանը:

-Մենք կոչ ենք անում միջազգային հանրությանն ակտիվացնել ջանքերը՝ ապահովելու նրա անհապաղ եւ անվերապահ ազատ արձակումը՝ Ադրբեջանում անօրինաբար կալանավորված մյուս հայ ղեկավարների հետ միասին»:

Չնայած Եվրախորհրդարանի, Ֆրանսիայի Սենատի, Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի եւ Լորդերի պալատի, ԱՄՆ-ի Կոնգրեսի ղեկավարների, գործարար աշխարհի եւ համայնքային առաջնորդների՝ հայ բանտարկյալներին ազատ արձակելու մասին բազմաթիվ կոչերին, Ռուբեն Վարդանյանը շարունակում է մնալ նախնական կալանքի տակ՝ առանց անգամ դատավարության օրվա նշանակման կամ նրա նկատմամբ պաշտոնապես մեղադրանքի առաջադրման:

«Մեկ տարի կալանքի տակ պահելն առանց դատավարության կամ կոնկրետ ապացույցների՝ վկայում է այս գործի քաղաքական բնույթը,- նկատել է Վարդանյան ընտանիքի միջազգային իրավապաշտպան Ջարեդ Գենսերը:

- Ադրբեջանը պետք է հարգի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրով ստանձնած պարտավորությունները եւ անհապաղ ազատ արձակի Ռուբեն Վարդանյանին»:

Վարդանյանը կարճ ժամանակով զբաղեցրել է Լեռնային Ղարաբաղի պետնախարարի պաշտոնը եւ խիստ քննադատության է ենթարկել Ադրբեջանին՝ ացախահայության նկատմամբ դաժան վերաբերմունքի եւ միջազգային իրավունքի խախտումների համար:

COP29-ը հյուրընկալելու հետ կապված՝ Ադրբեջանում մարդու իրավունքների վիճակի վատթարացման հարցերը գտնվում են միջազգային ուշադրության կենտրոնում: Նոյեմբերին անցկացվելիք համաժողովից առաջ Ադրբեջանը կոչ է արել «համաշխարհային զինադադար» հաստատել եւ դադարեցնել ընթացիկ բոլոր հակամարտությունները, ինչը քննդատվել է՝ հաշվի առնելով Ադրբեջանում ազատազրկված անձանց աճող թիվը եւ մարդու իրավունքների հարցերով միջազգային իրավունքի շարունակական խախտումները:

Շատ իրավապաշտպան կազմակերպություններ, այդ թվում՝ Freedom House-ը, պնդում են, որ Ադրբեջանի գործողությունները Լեռնային Ղարաբաղում էթնիկ զտումներ էին, եւ էթնիկ հայերը «դիտավորյալ կերպով ենթարկվել են կանոնավոր հարձակումների, ահաբեկման, զրկվել են հիմնարար իրավունքներից եւ համապատասխան կենսապայմաններից, ինչպես նաեւ Ադրբեջանի կողմից ենթարկվել են բռնի տեղահանման»: Միջազգային քրեական դատարանի նախկին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն եւս, ի թիվս այլոց, հաստատում է, որ Ադրբեջանի գործողությունները համապատասխանում են «ցեղասպանություն» ոճրագործությանը:

2017 թվականից ի վեր Ադրբեջանը հետեւողականորեն զիջում է իր դիրքերը Freedom House-ի «Ազատությունն աշխարհում» զեկույցում՝ ներկայումս 100 միավորից ունենալով ընդամենը 7-ը: Կոռուպցիայի ընկալման ինդեքսում էլ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» կազմակերպությունը 180 երկրների մեջ Ադրբեջանին հատկացրել է 154-րդ տեղը՝ հաշվի առնելով համատարած կոռուպցիայի մակարդակը, մրցակից քաղաքական գործիչների նկատմամբ ճնշումներն ու քաղաքացիական ակտիվության սահմանափակումները:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄ Է ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ

«Սահմանազատման հաջորդ էտապի վերաբերյալ դեռ որոշում չկա». այս մասին Եռաբլուրում լրագրողների հետ զրույցում ասել է ՀՀ փոխվարչապետ Միհր Գրիգորյանը:

«Դեռ պետք է ավարտենք կանոնակարգի հետ կապված ներպետական ընթացակարգերը»,- ասաց նա:

Գրիգորյանի խոսքով՝ սահմանազատման գործընթացն իրականացնելու շուրջ պայմանավորվածության հիմնական նպատակը այն է, որ բոլոր խնդիրները հանգիստ, ֆունդամենտալ ու իրավական լուծում ստանան:

Խոսելով հայ-ռուսական հարաբերությունների մասին՝ նա նշեց՝ կան պրոբլեմներ:

«Բայց, կարծում եմ, մենք պետք է հավասարակշռենք ու փորձենք բոլոր խութերը վերացնել»,- ասաց նա:

Փոխվարչապետի խոսքով՝ աշխարհում իրավիճակը բավականին բարդ է, տարածաշրջանում՝ առավել եւս:

«Ըստ այդմ, իհարկե, առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնց բացատրությունները լիարժեք տրված չեն, կարծում եմ՝ պետք է փորձել բացատարությունները հասկանալ ու ճիշտ որոշումներ կայացնել»,- նշեց փոխվարչապետը:

«ԵՍ ԳՆԱԼՈՒ ԵՄ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆԵՔԻՆ». ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆՅԱՆ

Պատերազմից 4 տարի է անցել ու այս 4 տարվա ընթացքում ընդդիմությունը պայքարել է ու պայքարի գործիքակազմը տարբեր է եղել: Այս մասին «Եռաբլուր» զինվորական պանթեոնում ասաց «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանը:

«Մենք պայքարել ենք ԱԺ-ից դուրս, այն արտահայտվել է մի քանի շարժումներում, բոլոր տեղերում էլ կարծում եմ փորձել ենք գեներացնել մեր ժողովրդի գիտակից հատվածի մի մասին, որը պետք է թույլ չտա, որպեսզի Արցախը հայաթափվի, իսկ ՀՀ-ն՝ գահավիժի»,- ասաց նա:

Սեյրան Օհանյանի խոսքով՝ անհրաժեշտ է ուժերի ավելի լայն գեներացում:

Լրագրողի հարցին՝ մասնակցելո՞ւ են Մյուռոնօրհնեքի արարողությանը՝ հաշվի առնելով, որ իշխանական վերանախավը նույնպես մասնակցելու է, Օհանյանն ասաց. «Մյուռոնօրհնեքին ես ու էլի մի քանի պատգամավոր մեր խմբակցությունից, հրավեր ստացել ենք ու կմասնակցենք: Մենք միաժամանակ տարբեր միջոցառումների ենք գտնվել, ինչու պետք է ես կաշկանդվեմ Մյուռոնօրհնեքին գնալուց, իշխանությունը լինի, ես չլինե՞մ, թող իրենք չլինեն, ես իմ պարտքը կատարելու եմ ու գնալու եմ»:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ Է ԱՐՑԱԽԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻՆ

Երեկ լրացել է Արցախի դեմ Ադրբեջանի հարձակման 4-րդ տարելիցը:

Առավոտյան «Եռաբլուր» զինվորական պանթեոն են այցելել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը, ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, փոխվարչապետ Միհր Գրիգորյանը, ՊՆ նախարար Սուրեն Պապիկյանը, Գլխավոր շտաբի պետ Էդվարդ Ասրյանը, բազմաթիվ զինվորականներ,, նախարարներ ու ՔՊ-ական պատգամավորներ: Քիչ առաջ Ալեն Սիմոնյանի եւ Արցախի պատգամավոր Մետաքսե Հակոբյանի միջեւ ըհդհարում եղավ, որի ժամանակ Ալեն Սիմոնյանը վիրավորեց Արցախի պատգամավորին:

«Ջիբիլի վրայի կատվին տարեք այստեղից», - ասել է Ազգային Ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը:

ՄԻԵԴ-Ը ՎՃԻՌ Է ԿԱՅԱՑՐԵԼ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾՈՎ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանին պարտավորեցրել է վճարել 2.000 եվրո: Դատարանը գտնում է, որ Հայաստանի ներպետական դատարանները չեն ունեցել համապատասխան եւ բավարար պատճառներ Միքայելյանին կալանքի տակ պահելու համար:

2016թ.-ին «Սասնա ծռեր» խմբավորման կողմից զինված ապստամբությանը հաջորդեցին ցույցեր, երթեր եւ հավաքներ Երեւան քաղաքի մի շարք փողոցներում: Գագիկ Միքայելյանը, ով այդ ժամանակ աշխատում էր Երեւանի դպրոցներից մեկում որպես ուսուցիչ, հազարավոր անձանց նման իրացրել է հավաքներին մասնակցելու իր իրավունքը: Հուլիսի 20-ին ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից Գ. Միաքայելյանը ձերբակալվել է եւ տարվել ոստիկանության բաժանմունք: Ապա վերջինիս մեղադրանք է առաջադրվել այդ ժամանակ ցույցերը եւ ցացարարներին ցրելու նպատակով կիրառվող հայտնի «զանգվածային անկարգություններին մասնակցելը» հանցակազմով:

2016թ-ից ՀՔԱՎ գրասենյակի փաստաբան Անի Չատինյանը ստանձնել է Միքայելյանի իրավունքների պաշտպանությունը: Իրավունքների պաշտպանությունը ներառել է ինչպես մեղադրանքի շուրջ Միքայելյանին պաշտպանելը ներպետական դատարաններում, այնպես էլ կալանավորման իրավաչափությունը վիճարկելը եւ՛ ներպետական դատարաններում, եւ՛ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում: ՄԻԵԴ-ը վերահաստատել է, որ ըստ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի հաստատված նախադեպային իրավունքի, կալանավորման օրինականությունը հիմնավորող պայմանն այն է, որ ձերբակալված անձի նկատմամբ առկա լինի հանցագործության կատարման ողջամիտ կասկած, սակայն որոշակի ժամանակահատված անց այն այլեւս բավարար չէ: Նման դեպքերում Դատարանը պետք է պարզի, թե արդյոք դատական մարմինների կողմից ներկայացված այլ հիմքերը շարունակում էին արդարացնել ազատությունից զրկելը: Երբ նման հիմքերը «համապատասխան» եւ «բավարար» են, Դատարանը նաեւ պետք է պարզի, թե արդյոք պետական մարմինները «հատուկ ջանասիրություն» են ցուցաբերել դատական վարույթների ընթացքում: ՄԻԵԴ-ը նաեւ արձանագրել է, որ կալանքի ցանկացած ժամկետի հիմնավորումը, որքան էլ որ կարճ լինի, պետք է հիմնավոր կերպով ապացուցվի պետական մարմինների կողմից: Որոշելիս՝ արդյոք անձը պետք է ազատ արձակվի կամ մնա կալանքի տակ, պետական մարմինները պարտավոր են դիտարկել նաեւ այլընտրանքային միջոցառումներ՝ ապահովելու տվյալ անձի ներկայությունը դատարանում: Դատական ծառայողի՝ կալանավորման համար «համապատասխան» եւ «բավարար» պատճառաբանելու պահանջը, ի լրումն ողջամիտ կասկածի, կիրառվում է արդեն իսկ կալանավորումը նշանակելու մասին առաջին որոշման ժամանակ, այսինքն՝ «անմիջապես» ձերբակալությունից հետո: Հետեւաբար, ՀՔԱՎ բողոքը ընդունելի է եւ բացահայտում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի խախտում:

2024թ.-ի սեպտեմբերի 26-ին ՄԻԵԴ-ը Միքայելյանն ընդդեմ ՀՀ -ի որոշում է հրապարակել, որով արձանագրել է՝ Հայաստանի ներպետական դատարանները չեն ունեցել համապատասխան եւ բավարար պատճառներ Միքայելյանին կալանքի տակ պահելու համար եւ փոխհատուցում է սահմանել 2.000 եվրո:

Չատինյանը նշում է, որ Հայաստանի Հանրապետության դեմ ինչպես կոնվենցիայով նախատեսված մնացած հիմնարար իրավունքների խախտումների գործերը, այնպես էլ 5-րդ հոդվածի խախտման փաստը ճանաչելու տեսանկյունից շատ կարեւոր է նմանատիպ վճիռների հայտարարությունը, քանի որ ՀՀ-ում մշտապես որպես խափանման միջոց ընտրվում է կալանավորումը եւ հատկապես ցույցերի, երթերի, խաղաղ հավաքների ընթացքում կիրառվում է որպես պատժիչ միջոց:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԽՆԴՐԵԼ Է ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ՉՏԱԼ

Արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը սոցցանցի իր էջում գրում է.

«Վերջին օրերին բազմաթիվ անգամներ եմ խնդրել տիկին Գեւորգյանին հրաժարական չտալ: Ցավոք, նա մերժեց իմ բոլոր խնդրանքները:

Շատ ափսոս, որ առանձին անհատների չափազանց անարդար ու մանրախնդիր հարձակումների պատճառով մեր նախարարությունը եւ պետական համակարգը կորցրեց իրապես արժեքավոր մասնագետի ու կառավարչի:

Պառլամենտարիզմի լավագույն դրսեւորումը կլինի նման խարդավանքների համար քաղաքական հասցեական պատասխանատվությունը»:

Հիշեցնենք, որ գրել էինք, Սիրվարդ Գեւորգյանը հրաժարականի դիմում է ներկայացրել Արդարադատության նախարարի տեղակալի պաշտոնից:«Մեծ ցավով ու ափսոսանքով եմ թողնում Արդարադատության նախարարության իրապես պրոֆեսիոնալ թիմը՝նախարար Գրիգոր Մինասյանի գլխավորությամբ: Այս համակարգում երկար տարիներ եմ աշխատել ու դեռ շատ անելիքներ կային: Շատ կուզեի մասնակցել այդ ամենօրյա ծանր, բայց իրապես կարեւոր աշխատանքին:

Նորից շնորհակալ եմ Վարչապետ Նիկոլ Փաշինյանին, ինձ ցուցաբերված մեծ վստահության համար»,- մասնավորապես գրել է Գեւորգյանը:

ՈՎՔԵՐ ԵՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթը շարունակում է հրապարակել, թե որ աղմկահարույց գործերով դատախազներն են արժանացել շնորհակալագրի կամ պարգեւի:

«Մարտի 1-ի» գործով մեղադրյալներ Ռոբերտ Քոչարյանի, ՊՆ նախկին նախարար Սեյրան Օհանյանի, նախկին փոխվարչապետ Արմեն Գեւորգյանի, ԳՇ նախկին պետ Յուրի Խաչատուրովի գործով մեղադրող դատախազ Հայկ Հովհաննիսյանը եւս արժանացել է պարգեւի:

Հիշեցենք, որ Գլխավոր դատախազությունը հայտնել էր, Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը շնորհավորել է Դատախազության աշխատակիցներին Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 33-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հանդիսավոր նիստի ավարտին ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության մի շարք դատախազների եւ Դատախազության աշխատակիցների հայտարարվել է շնորհակալություն, վերջիններս պարգեւատրվել են հուշանվեր ժամացույցով, «ՀՀ դատախազության 105-ամյակ» հոբելյանական մեդալով, «ՀՀ դատախազություն» կրծքանշանով, դրամական պարգեւով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԱՀԱԶԱՆԳ ԵՂԵ՞Լ Է

Համացանցում տեղեկություններ են տարածվում՝ իբր Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում ինչ-որ մեկը դպրոցների մոտ երեխաներին նստեցնում է ավտոմեքենան եւ առեւանգում: Հրապարակումներում նաեւ նշվում է, թե բազմաթիվ ծնողներ այս հարցով ահազանգել են ոստիկանություն:

Տեղեկացնում ենք, որ նշված բովանդակությամբ ահազանգ կամ հաղորդում ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոնում կամ Մալաթիայի բաժնում չի ստացվել:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքում տեղեկություն է ստացվել, որ սեպտեմբերի 25-ին Մազմանյան փողոցի բնակիչ 57-ամյա մի տղամարդ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով Շրջանային փողոցում փորձել է առեւանգել երկու անչափահասի:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում տղամարդը հայտնաբերվել, ձերբակալվել եւ կազմված փաստաթղթերով ներկայացվել է քննչական բաժին: Ավտոմեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք:

17 ՄԼՐԴ ՀՀ ԴՐԱՄԻ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչությունը, ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, հարկերը վճարելուց խուսափելու դեպքերը բացահայտելու նպատակով՝ 2024 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ձեռնարկել է 97 օպերատիվ-հետախուզական միջոցառում:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումները, հատկապես, ձեռնարկվել են շինանյութի, սննդամթերքի, միրգ-բանջարեղենի, հագուստի, կահույքի, տնտեսական ապրանքների, կենցաղային տեխնիկայի, կոսմետիկայի, դիզելային վառելիքի առեւտրով, ինչպես նաեւ հանրային սննդի կազմակերպմամբ ու հյուրանոցային ծառայությունների մատուցմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակում տնտեսավարող սուբյեկտների գործունեության հասցեներում առկա համակարգիչների, սերվերային համակարգերի եւ սկզբնական հաշվապահական հաշվառմանը վերաբերող այլ կրիչների հետազոտմամբ հայտնաբերվել է շուրջ 17.2 միլիարդ դրամի ստվերային շրջանառություն, իսկ թաքցված հարկի գումարը կազմել է շուրջ 4.4 միլիարդ դրամ, որից շուրջ 800 միլիոն դրամը տնտեսավարող սուբյեկտների կողմից արդեն իսկ վերականգնվել է պետական բյուջե:

Համապատասխան հիմքերի առկայության պարագայում հաղորդումներ են ներկայացվել ՀՀ քննչական կոմիտե, նախաձեռնվել են քրեական վարույթներ: Ներկայում միջոցներ են ձեռնարկվում պետությանը պատճառված վնասի վերջնական չափը հստակեցնելու եւ այն պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝սեպտեմբերի 25-ից 26-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 78 դեպք՝որից 2-ը նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ԴԺԳՈՀ ԵՆ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻՑ

Իջեւան համայնքի Ազատամուտ գյուղը խորհրդային տարիներին բանվորական ավան էր: Ազատամուտում ներկայումս բնակվում է շուրջ 3300 մարդ: Ազատամուտի բնակիչները դժգոհ են «Վեոլիա ջուր» ընկերության կողմից մատակարարվող խմելու ջրի որակից: Ազատամուտ բնակավայրի վարչական ղեկավարի պաշտոնակատար Արտակ Չոբանյանը հայտնեց, որ գյուղը խմելու ջուր է ստանում արտեզյան 2 հորերից, մատակարարվող ջուրը լաբորատոր փորձաքննության է ենթարկվել, այն համապատասխանում է խմելու ջրին ներկայացվող պահանջներին: Ա. Չոբանյանն ասաց, որ Ազատամուտի բնակիչները նախկինում խմելու ջուր ստանում էին օրումեջ, 3 ամիս առաջ խմելու ջրամատակարարումը դարձել է ամենօրյա,հետեւյալ ժամանակացույցով՝ ժամը 17:00-ից մինչեւ 23:00-ն:

ՍՊԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՁԱԽՈՂՎԵԼ Է

Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հայտարարեց, որ 2020 թվականի հուլիսի 1-ից Հայաստանում վաճառվող միսը պետք է ունենա սպանդանոցային ծագում, իրականացվեց պետական աջակցությամբ սպանդանոցների գործարկման ծրագիր: Անցել է ավելի քան 4 տարի, սակայն քիչ սպանդանոցներ են գործակվել, եղածներն էլ իրենց հզորության քիչ մասով են գործում: Սպանդանոցները գյուղերից բավական հեռու են, անասատերերը խուսափում են մորթվող անասունները սպանդանոց տեղափոխելու ծախսերից, անասունների տեղափոխման հետ կապված դժվարություններից: Տավուշի մարզում կա 5 քաղաք, 57 գյուղ,մարզի 62 բնակավայրերից 41-ն ունի շարժական սպանդանոցային ծառայության կարիք: Տավուշի մարզպետարանը ՀՀ կառավարության 29 օգոստոսի 2024թ. թիվ 1394-Լ որոշման 4-րդ կետի 1-ին ենթակետի հանձնարարականի համաձայն՝ հրապարակել է Տավուշի մարզի այն բնակավայրերի ցանկը, որտեղ անհրաժեշտություն կա սպանդանոցային ծառայության, որոնք գտնվում են գործող սպանդանոցներից առնվազն 15 կմ հեռավորության վրա: Դրանք են Իջեւան համայնք՝ Աչաջուր, Սեւքար, Սարիգյուղ, Կիրանց, Ծաղկավան, Դիտավան, Այգեհովիտ, Վազաշեն, Գանձաքար, Լուսահովիտ բնակավայրեր: Դիլիջան համայնք՝ Հաղարծին, Հովք, Աղավնավանք, Խաչարձան բնակավայրերը: Բերդ համայնք՝ Պառավաքար, Վարագավան, Ծաղկավան, Տավուշ, Վ.Կ.Աղբյուր, Նորաշեն, Մովսես, Չորաթան, Արծվաբերդ, Ն.Կ. Աղբյուր, Այգեպար, Այգեձոր, Չինարի բնակավայրեր: Նոյեմբերյան համայնք՝ Ոսկեպար, Բաղանիս, Կոթի, Բարեկամավան, Ոսկեվան, Ջորական, Հաղթանակ, Արճիս, Այրում, Լճկաձոր, Պտղավան, Դեղձավան, Բագրատաշեն, Դեբեդավան բնակավայրերը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՈԳԵՇՆՉՈՒՄ Է ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ

Հայտնի եւ ախուոյժ մի օր. ախարահոչակ թառահար Միքայել Ոսկանյանն այցելեց «Ընտանիք եւ Համայնք» ՀԿ-ի Մեծամորի կենտրոն՝ թողնելով անջնջելի հետք ավելի քան 550 երեխաների սրտերում, որոնց թվում էին նաեւ Արցախից բռնատեղահանված երեխաներ: Հայկական երաժշտական ժառանգության պահպանմանը նվիրված իր բացառիկ տաղանդով եւ նվիրվածությամբ հայտնի Ոսկանյանը ոգեւորեց փոքրիկ լսարանին իր կրքով եւ արվեստով՝ այդ օրը վերածելով ուսուցման եւ ոգեշնչման անմոռանալի փորձի:

Հայկական երաժշտական ժառանգության ուղեւորություն

Իր այցի ընթացքում, Ոսկանյանը կիսվեց իր խորը գիտելիքներով թառի մասին՝ այս հին հայկական լարային գործիքը ներկայացնելով երեխաներին իր հարուստ պատմությամբ, յուրահատուկ կառուցվածքով եւ նվագելու համար անհրաժեշտ բարդ տեխնիկայով: Նրա պատմությունները ոչ միայն կյանք տվեցին գործիքի մշակութային նշանակությանը, այլեւ երեխաների մեջ առաջացրին հպարտության եւ հետաքրքրության զգացում:

Ինտերակտիվ սեանսի ժամանակ երեխաներին հնարավորություն տրվեց հարցեր տալ, շոշափել գործիքը եւ նույնիսկ փորձել նվագել մի քանի նոտա: Նրանց աչքերը փայլում էին հուզմունքից, երբ նրանք կապվում էին այս գեղեցիկ հայկական ժառանգության հետ՝ առաջացնելով նոր հետաքրքրություններ եւ կիրքեր:

Հիշարժան կատարում

Օրվա կարեւորագույն պահը Միքայել Ոսկանյանի կախարդական կատարումն էր: Ամեն նոտան տարածության մեջ արձագանքում էր՝ ունկնդիրներին տեղափոխելով մեղեդու եւ ռիթմի աշխարհ՝ ցուցադրելով թառի արտահայտիչ ուժը: Երեխաները լսում էին հիացած, ոմանք մեղմորեն օրորվում էին երաժշտության տակ, մյուսներն ամբողջությամբ ընկղմված էին կատարումի մեջ: Մթնոլորտը լցված էր հայտնագործման եւ ստեղծագործական արտահայտման բերկրանքով:

Աջակցություն ավելի մեծ նպատակին

Միքայել Ոսկանյանի այցը նշանավորեց «Ընտանիք եւ Համայնք. Արվեստի եւ արհեստների թերապիայի ծրագիր - ստեղծագործականության միջոցով ներուժի բացահայտում» դրամահավաքի մեկնարկը: Այս նախաձեռնությունն ուղղված է խոցելի խմբի երեխաներին արվեստի եւ արհեստների թերապիա տրամադրելուն՝ օգնելու նրանց արտահայտել իրենց զգացմունքներն ու դիմակայել դժվարություններին ստեղծագործական արտահայտման միջոցով: Թուֆենկյան հիմնադրամը պարտավորվել է կրկնապատկել բոլոր նվիրատվությունները՝ ավելացնելով յուրաքանչյուր ներդրման ազդեցությունը:

«Մենք խորապես շնորհակալ ենք Միքայելին՝ մեր կենտրոն իր տաղանդն ու կիրքը բերելու համար», - ասաց «Ընտանիք եւ Համայնք» ՀԿ-ի ներկայացուցիչը: «Նրա այցելությունը ոչ միայն ուրախացրեց երեխաներին, այլեւ ոգեշնչեց նրանց ուսումնասիրել արվեստը եւ կապ հաստատել իրենց մշակութային արմատների հետ: Նվիրատուների եւ Թուֆենկյան հիմնադրամի նման գործընկերների աջակցության շնորհիվ մենք կարող ենք շարունակել այս անգնահատելի փորձառությունները տրամադրել կարիքավոր երեխաներին»:

Ուրախության եւ ստեղծագործության օր

Երեխաները պարզապես դիտորդներ չէին, նրանք ակտիվորեն մասնակցեցին տոնակատարություններին: Ոգեշնչված Միքայելի կատարումից՝ նրանք երգեցին երգեր, պարեցին եւ նույնիսկ տիկնիկային ներկայացում ցուցադրեցին՝ դրսեւորելով իրենց ստեղծագործական տաղանդները: Կենտրոնը լցված էր ուրախությամբ, ծիծաղով եւ համայնքային ոգով՝ արտահայտելով այն ամենը, ինչի նպատակն ունի արվեստի եւ արհեստների թերապիայի ծրագիրը:

Ինչպես կարող եք օգնել

Աջակցելով այս արշավին՝ դուք կարող եք ավելի շատ նմանօրինակ օրեր պարգեւել «Ընտանիք եւ Համայնք» ՀԿ-ի Մեծամորի կենտրոնի երեխաներին: Ամեն նվիրատվություն, անկախ չափից, կրկնապատկվելու է Թուֆենկյան հիմնադրամի կողմից՝ դարձնելով ձեր ներդրումը կրկնակի ազդեցիկ:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂԻՔԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՊՔԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված առողջապահական տվյալները վկայում են՝

այլ սալմոնելոզային վարակները 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա համեմատ նվազել են:

2023 թվականին սալմոնելոզային վարակների 101 դեպք է գրանցվել, իսկ 2024 թվականին՝ 80 դեպք: 20-ով պակասել են վարակման դեպքերը:

Այլ մանրէային աղիքային վարակները 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա համեմատ եւս նվազել են: 2023 թվականին սալմոնելոզային վարակների 375 դեպք է գրանցվել, իսկ 2024 թվականին՝338 դեպք: 37-ով պակասել են վարակման դեպքերը:

Չճշտված եւ ենթադրյալ աղիքային վարակները 2024 թվականի հունվար-հուլիս ամիսներին նախորդ տարվա համեմատ կրկին նվազել են: 2023 թվականին սալմոնելոզային վարակների 685 դեպք է գրանցվել, իսկ 2024 թվականին՝ 582 դեպք: 103-ով պակասել են վարակման դեպքերը:

«Ժողովուրդ» օրաթերթն արձանագրել է, որ աղիքային վարակման դեպքերը վերջին երկու տարում նվազել են, սակայն որոշ հիվանդությունների եւ առողջությանը վնաս հասցնելու դեպքերը աճել են:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Այս պահին շատ օգտատերերի մոտ առանց բացարձակ իրենց կողմից ինչ-որ բան անելու, գողացել են WhatsApp հաշիվները. այս մասին հայտնում է տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը:

«Բացի դրանից, շատերը չեն կարողանում մտնել «Ֆեյսբուք», քանի որ երկփուլայինի սմս-ը չի գալիս»,-գրել է նա:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 13 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՔԱՐԳԱՑՈՒՄ

ԿԱՆՑԿԱՑՎԻ «Innovate Armenia» ՄՐՑՈՒՅԹԸ

Հայաստանում առաջին անգամ կանցկացվի համահայկական Innovate Armenia մրցույթը: Նպատակն է՝ խրախուսել եւ աջակցել Հայաստանում տաղանդավոր ստեղծարարների կողմից նորարարական ֆիզիկական պրոդուկտների զարգացմանը եւ միջազգային շուկաներում կենսունակ բիզնես հիմնելուն: Մրցույթը նախաձեռնել եւ իրականացնում է TCF Armenia-ը:

Մրցույթին կարող են մասնակցել թե՛ անհատներ, թե՛ թիմեր ամբողջ Հայաստանից: Սա աննախադեպ հնարավորություն է մրցույթի մասնակիցների համար՝ համապատասխանեցնելու իրենց գաղափարները միջազգային չափանիշներին, դարձնելու դրանք մրցունակ ամբողջ աշխարհում, հավաքելու գումար նախնական արտադրության համար, ձեռք բերելու կապեր եւ օգտակար ծանոթություններ: Անհրաժեշտ կլինի ներկայացնել գաղափարի նախապատմությունը, պրոդուկտի ամբողջական եւ մանրակրկիտ նկարագիրը՝ գծապակերներով եւ հավանական սկետչերով, ինչպես նաեւ շուկայի ուսումնասիրություն ու զարգացման ծրագիր: Բնականաբար, պետք է առանձնահատուկ ընդգծել, թե ինչով է նախագիծն առանձնահատուկ եւ արժանի վերածվելու իրական ապրանքի:

Ժյուրին գնահատելու է մասնակիցների նորարարական գաղափարները, իրագործելիությունը, շուկայի պոտենցիալը, թիմի կամ անհատի մասնագիտական ներուժը եւ ներկայացման հմտությունները:

Առաջին հորիզոնականը զբաղեցրած անհատը կամ թիմը կստանա համապարփակ աջակցություն գաղափարի վավերացումից մինչեւ արտադրություն, ներառյալ՝ մենթորության հնարավորություն ոլորտի փորձագետների հետ, շուկայի համապատասխանության ստուգում, նախատիպի ստեղծման ծառայությունների հասանելիություն, քրաուդֆանդինգի աջակցություն, ինչպես նաեւ նեթվորքինգի հնարավորություններ՝ ներդրողների եւ արտադրողների մեծ բազայի հետ:

Երկրորդ տեղը զբաղեցրած թիմը կամ անհատը հնարավորություն կունենա օգտվել շուկայի համապատասխանության ստուգման ծառայությունից, կմասնակցի մենթորության, ինչպես նաեւ կստանա պոտենցիալ շուկա մուտք գործելու համար պրոդուկտի նախապատրաստման ուղղորդում:

Երրորդ հորիզոնականում հայտնված թիմը կամ անհատը կօգտվեն շուկայի համապատասխանության ստուգման ծառայությունից եւ մենթորությունից:

Նշենք, որ մրցույթի մասնակցության հայտերի ներկայացման վերջնաժամկետը հոկտեմբերի 23-ն է:

ԹՎԱՅԻՆ ՊԱՏԿԵՐ

ԱՌՔՈՒՎԱՃԱՌՔ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Վիճակագրական կոմիտեից «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, թե օտարերկրյա քաղաքացիների կողմից ինչքա՞ն են կազմել գնված եւ վաճառված անշարժ գույքի գործարքները՝ ըստ ՀՀ մարզերի եւ մայրաքաղաք Երեւանի՝ 2024 թվականի հուլիս ամսում:

Այսպիսով, օտարերկրյա քաղաքացիների կողմից մայրաքաղաք Երեւանում գնվել է 70, իսկ վաճառվել 60 անշարժ գույք:

Արագածոտնի մարզում գնվել է 5, վաճառվել՝ 25 գույք:

Արարատի մարզում 7 գույք է գնվել, սակայն վաճառվել է 24 անշարժ գույք:

Օտարերկրյա քաղաքացիների կողմից Արմավիրի մարզում գնվել է 13, իսկ վաճառվել 26 անշարժ գույք:

Գեղարքունիքի մարզում գնվել է 8, վաճառվել՝ 9 անշարժ գույք:

Լոռու մարզում գնվել է 4 անշարժ գույք, սակայն վաճառվել է 26-ը:

Կոտայքի մարզում գնվել է 18, վաճառվել է 39 անշարժ գույք:

Շիրակի մարզում գնվել է 9, վաճառվել՝ 12 անշարժ գույք:

2 անշարժ գույք գնվել, իսկ 7-ը վաճառվել է Սյունիքի մարզում:

Վայոց Ձորի մարզում գնվել է ընդամենը 3 գույք եւ վաճառվել 2-ը:

Տավուշի մարզում գնվել է 9 գույք, վաճառվել՝ 23-ը:

Ընդհանուր ՀՀ-ում օտարերկրյա քաղաքացիների կողմից գնվել է 148 անշարժ գույք, իսկ վաճառվել՝ 253-ը:

Նայելով այս վիճակագրությանը՝ ակնհայտորեն երեւում է, որ վաճառված անշարժ գույքի թիվը զգալիորեն գերազանցում է գնված անշարժ գույքի թվին՝ հատկապես սահմանամերձ մարզերում:

Առավել հետաքրքիրն այն է, թե ի՞նչ անշարժ գույքեր են ամենաշատը գնել եւ վաճառել օտարերկրյա քաղաքացիները ՀՀ-ում:

Օտարերկրյա քաղաքացիների կողմից ամենաշատ գնված անշարժ գույքը բազմաբնակարան շենքի բնակարանն է: Բազմաբնակարան շենքի բնակարան գնվել է 56, իսկ վաճառվել՝ 95 հատ:

Ամենաքիչ գնված անշարժ գույքն արտադրական նշանակության շինությունն է, որից գնվել է 2, իսկ վաճառվել՝ 1 հատ:

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե օտարերկրյա քաղաքացիների կողմից քանի՞ անշարժ գույքի գործարքներ են եղել ՀՀ-ում 2024 թվականի հուլիս ամսին՝ ըստ գույքի տեսակների եւ երկրների ու տարածաշրջանների:

Ներկայացնում ենք այն 3 երկրները, որոնց քաղաքացիներն ամենաշատն են ՀՀ-ում անշարժ գույք գնել:

Այսպիսով, առաջատարը Ռուսաստանի Դաշնությունն է: Ռուսաստանի Դաշնության 76 քաղաքացի ՀՀ-ում գնել է բազմաբնակարան շենքի 35 բնակարան, բնակելի 11 տուն, արտադրական նշանակության 1 շինություն, հասարակական նշանակության 3 շինություն, 13 ավտոտնակ եւ 13 հողատարածք:

Երկրորդ տեղում ԱՄՆ-ի քաղաքացիներն են: ԱՄՆ-ի 35 քաղաքացի ՀՀ-ում գնել է բազմաբնակարան շենքի 9 բնակարան, բնակելի 7 տուն, արտադրական նշանակության 1 շինություն, 7 ավտոտնակ եւ 11 հողատարածք:

Երրորդ տեղում Եվրոպական պետությունների քաղաքացիներն են, սակայն համեմատաբար ՌԴ-ի եւ ԱՄՆ-ի քաղաքացիների՝ քիչ են ձեռք բերել անշարժ գույք ՀՀ-ում:

Եվրոպական պետությունների 21 քաղաքացի ՀՀ-ում գնել է բազմաբնակարան շենքի 9 բնակարան, բնակելի 1 տուն հասարակական նշանակության 1 շինություն, 1 ավտոտնակ եւ 9 հողատարածք:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ԻՆՉ ՎԻՃԱԿ Է ԼՈՌԻՈՒՄ 5 ԱՄԻՍ ԱՆՑ

Մաիսի 25-26-ին Լոռու մարզի աղետից հետո մեծ իրարանցում էր սկսվել, տեղի բնակիչներից շատերը զրկվել էին իրենց տանը ապրելու հնարավորությունից, սակայն գրեթե 5 ամիս անց շատ ընտանիքներ էլ կան, ովքեր նույն կարգավիճակում են դեռ, քանի որ աղետի հետեւանքով մնասվել է ամբողջ տունը եւ կրկին վերականգնել դժվար է:

Ալավերդի համայնքի ղեկավար Դավիթ Ղումաշյանը լրագրողների հետ զրույց ունեցավ, որի ժամանակ հավաստիացրեց, որ բոլոր խնդիրները արդեն լուծում են ստանում:

Տեղեկացանք, որ մինչ մեզ հետ հանդիպումը համայնք էր ժամանել Լոռու մարզպետ Արամ Ղազարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը լրագրողների հետ զրույցի ժամանակ հարց հնչեցրեց, թե արդյոք մարզպետի այցը կապ ունե՞ր համայնքի վերականգնողական փուլի հետ եւ եթե այո, ապա ի՞նչ դիտարկումներ եղան նրա կողմից եւ ի՞նչ արժե սպասել առաջիկայում: Հանդիպումից հետո «Ժողովուրդ» օրաթերթը այցելեց նաեւ տեղի բնակիչներին, ովքեր նկարագրեցին, թե ի՞նչ վիճակում է հիմա իրենց տների վերականգման գործընթացը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքի տեսանյութում

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՆՐԱՄԱՄՆԵՐ

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե անշարժ գույքի նկատմամբ ի՞նչ գործարքներ են իրականացվել՝ ըստ գույքի տեսակների:

2023 թվականի հունիս ամսին բազմաբնակարան շենքի բնակարանի առքուվաճառքի գործարք եղել է 1193 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 1027 անգամ, նույն թվականի հունիս ամսին՝ 1161 անգամ:

Բնակելի տան առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիսին իրականացվել է 674 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 635 անգամ, նույն տարվա հունիս ամսին՝ 629 անգամ:

Արտադրական նշանակության շինության գործարք 2023 թվականի հունիսին իրականացվել է 72 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 47 անգամ, նույն ամսվա հունիս ամսին՝ 45 անգամ:

Հասարակական նշանակության շինության գործարք 2023 թվականի հունիսին իրականացվել է 189 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 159 անգամ, նույն թվականի հունիս ամսին՝ 190 անգամ:

Ավտոտնակի առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիս ամսին կատարվել է 221 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 421 անգամ, նույն տարվա հունիս ամսին՝ 347 անգամ:

Հողի առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիս ամսին կատարվել է 2149 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 2463 անգամ, նույն թվականի հունիս ամսին 2182 անգամ:

Գյուղատնտեսական նշանակության հողի առքուվաճառքի գործարք 2023 թվականի հունիս ամսին կատարվել է 1099 անգամ, իսկ 2024 թվականի մայիս ամսին՝ 1101 անգամ, նույն թվականի հունիս ամսին՝ 884 անգամ:

Ա. ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐՄԵՆԻԱ» ՓԱՌԱՏՈՆ

ԱՇԽԱՐՀՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ

«Արմենիա» միջազգային երաժշտական 8-րդ փառատոնի շրջանակում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ ելույթ է ունեցել մեծ համբավ վայելող թավջութակահար Մաքսիմիլիան Հորնունգը: Համերգային ծրագրում հնչել է երկու թավջութակի կոնցերտ՝ Կամիլ Սեն-Սանսի Թավջութակի թիվ 1 եւ Ալեքսեյ Շորի Թավջութակի թիվ 3 կոնցերտները: Նվագախումբը կատարել է նաեւ Էդվարդ Միրզոյանի «Լոռեցի Սամոն» սիմֆոնիկ պոեմը: Համերգը ղեկավարում էր մեծ ճանաչում ունեցող դիրիժոր, բազմաթիվ միջազգային մրցանակների դափնեկիր Նաբիլ Շեհատան:

Թավջութակահար Մաքսիմիլիան Հորնունգը, համերգից առաջ ներկայացնելով իր գործակցությունը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, նշել է, որ առաջին անգամ է համագործակցում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Նվագախումբը, թավջութակահարի խոսքով, հյուրընկալ է, կազմակերպված ու կարգապահ, ինչը խիստ կարեւոր է: «Շատ պրոֆեսիոնալ կոլեկտիվ է, որտեղ բոլորը բավականություն են ստանում երաժշտությունից»,- ասում է թավջութակահարը:

Խոսելով ներկայացվող ծրագրի մասին՝ Մաքսիմիլիան Հորնունգն ընդգծել է, որ Կամիլ Սեն-Սանսի Թավջութակի թիվ 1 կոնցերտն ինքը կատարել է բազում անգամներ ամենատարբեր նվագախմբերի հետ եւ շատ ու շատ երկրներում: Երաժիշտը նշում է, որ Սեն-Սանսի այս ստեղծագործությունն իր հիմնական երկացանկի մաս է կազմում: Այն շատ հոգեհարազատ է իրեն, այդ է պատճառը, որ անընդհատ ուզում է վերադառնալ այս կոնցերտին:

Շորի կոնցերտը, ըստ երաժշտի, թեեւ վերջին տարիներին է գրվել, սակայն այն տպավորությունն է, որ այն ոչ թե ժամանակակից, այլ դասական ռոմանտիկ դարաշրջանի ստեղծագործություն է:

Թավջութակահարի խոսքով՝ այս կոնցերտն ունկնդիրն անմիջապես ընկալում, հասկանում է՝ տարվելով երաժշտության հնչյուններով:

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ Գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյան Մաքսիմիլիան Հորնունգը ծանոթ է նաեւ հայ կոմպոզիտորների արվեստին: Նա նշում է՝ թեեւ երբեք չի կատարել Արամ Խաչատրյանի Թավջութակի կոնցերտը, սակայն ունկնդրել է այդ կոնցերտի բազմաթիվ ձայնագրություններ եւ բարձր է գնահատում այն: Նա նաեւ ավելացնում է, որ Խաչատրյանի Թավջութակի կոնցերտն իր՝ ապագայում կատարելիք ծրագրում է:

Հիշեցնենք, որ «Արմենիա» 8-րդ երաժշտական փառատոնն անցկացվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ: Փառատոնի համերգներին մասնակցում են բազմաթիվ զբոսաշրջիկներ, որոնք ծանոթանում են հայկական կատարողական արվեստին, ինչպես նաեւ հնարավորություն են ստանում Երեւանում հանդիպելու աշխարհում մեծ ճանաչում ունեցող երաժիշտների ու վայելելու նրանց կատարումները:

«Արմենիա» երաժշտական փառատոնի հաջորդ համերգը տեղի կունենա հոկտեմբերի 10-ին:

Ունկնդրին կներկայացվեն հայ կոմպոզիտորների՝ Տիգրան Մանսուրյանի, Արմեն Սմբատյանի, Էդուարդ Հայրապետյանի ստեղծագործությունները:

ԳԻՏԱԺՈՂՈՎՈՎ ՆՇՎԵՑ ՀՀ ՔԿ-Ի 10-ԱՄՅԱԿԸ

Սույն թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «ՀՀ Քննչական կոմիտե. 10-ամյա իրողություններ եւ զարգացման հեռանկարներ» խորագրով գիտաժողովը՝ նվիրված ՀՀ Քննչական կոմիտեի ձեւավորման 10-ամյակին:

Գիտաժողովին մասնակցեցին ՀՀ գիտական, կրթական, ուժային կառույցների ղեկավարներ, ներկայացուցիչներ եւ ուսանողներ:

Շնորհավորելով ՀՀ Քննչական կոմիտեի հոբելյանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը նշեց. «Ուրախ եմ, որ այս յուրահատուկ գիտաժողովն անցկացնելու հարթակ ընտրվել է Գիտությունների ազգային ակադեմիան: Ինչպես տնտեսության, պաշտպանության եւ այլ ոլորտների, այդպես էլ արդարադատության հիմքում գիտությունն է: Մենք միշտ պատրաստ ենք համագործակցության հանուն գիտահեն արդարադատության»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը: «Գիտությունների ազգային ակադեմիայի շենք մուտք գործելիս աննկարագրելի պատկառանք ես զգում: Մեզ համար մեծ պատիվ է, որ Քննչական կոմիտեի 10-ամյակին նվիրված միջոցառման գիտական մասն այս դահլիճում ենք անցկացնում», - նշեց Արգիշտի Քյարամյանը:

ՀՀ Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արսեն Այվազյանն ասաց, որ մշտապես կարեւորվել է համագործակցությունը Գիտությունների ազգային ակադեմիայի եւ ԲՈՒՀ-երի հետ: «Իրավաբանական դարբնոցներից մեր շարքերը համարել են որակյալ կադրեր», - նշեց նա:

Գիտաժողովի շրջանակում ՀՀ Քննչական կոմիտեն երկկողմ համագործակցության հուշագրեր ստորագրեց Գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Արդարադատության ակադեմիայի, Պետական կառավարման ակադեմիայի, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, «Ռուս-Հայկական» համալսարանի, Հայաստանում Ֆրանսիական համալսարանի, Հայաստանի Եվրոպական համալսարանի եւ Ներքին գործերի նախարարության կրթահամալիրի հետ:

Ըստ ՀՀ ԳԱԱ-ի հետ կնքված հուշագրի՝ ՀՀ Քննչական կոմիտեն եւ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնը կհամագործակցեն իրավագիտության ամբիոնի ուսանողների գործնական հմտությունների զարգացման, ուսանողների կարիերայի արդյունավետ պլանավորման գործում, իսկ ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը կներգրավվի կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց վերապատրաստման դասընթացներին:

Գիտաժողովի ընթացքում զեկուցումներով հանդես եկան ուսանողներ ՀՀ տարբեր ԲՈՒՀ-երից:ԳԱԱ-ում գիտաժողովով նշվեց ՀՀ Քննչական կոմիտեի 10-ամյակը. ստորագրվեցին համագործակցության հուշագրեր

Սույն թվականի սեպտեմբերի 23-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ «ՀՀ Քննչական կոմիտե. 10-ամյա իրողություններ եւ զարգացման հեռանկարներ» խորագրով գիտաժողովը՝ նվիրված ՀՀ Քննչական կոմիտեի ձեւավորման 10-ամյակին:

Գիտաժողովին մասնակցեցին ՀՀ գիտական, կրթական, ուժային կառույցների ղեկավարներ, ներկայացուցիչներ եւ ուսանողներ:

Շնորհավորելով ՀՀ Քննչական կոմիտեի հոբելյանը՝ ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սաղյանը նշեց. «Ուրախ եմ, որ այս յուրահատուկ գիտաժողովն անցկացնելու հարթակ ընտրվել է Գիտությունների ազգային ակադեմիան: Ինչպես տնտեսության, պաշտպանության եւ այլ ոլորտների, այդպես էլ արդարադատության հիմքում գիտությունն է: Մենք միշտ պատրաստ ենք համագործակցության հանուն գիտահեն արդարադատության»:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանը: «Գիտությունների ազգային ակադեմիայի շենք մուտք գործելիս աննկարագրելի պատկառանք ես զգում: Մեզ համար մեծ պատիվ է, որ Քննչական կոմիտեի 10-ամյակին նվիրված միջոցառման գիտական մասն այս դահլիճում ենք անցկացնում», - նշեց Արգիշտի Քյարամյանը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ՄԵԿՆԱՐԿԵՑ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը հաղթանակով է մեկնարկել Պեկինի բաց մրցաշարում:

Չինաստանի մայրաքաղաք Պեկինում ընթացող մրցաշարի մեկնարկում Կարեն Խաչանովը մրցեց Իսպանիան ներկայացնող Ռոբերտ Կարբալեսի հետ: Մոտ 2 ժամ ձգված մրցախաղում Խաչանովը հաղթեց մրցակցին երկու սեթում՝ 6:4, 6:3 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 27-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Նա Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է: Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստի լավագույն արդյունքը եղել է 2019 թվականին, երբ նա հասել է Rolan-Garros-ի քառորդ եզրափակիչ եւ 2021 թվականին՝ դարձյալ քառորդ եզրափակիչ Ուիմբլդոնում, իսկ 2022-ին նա հասավ US Open-ի կիսաեզրափակիչ: 2023 թվականին էլ Խաչանովը դուրս մնաց AusOpen-ի կիսաեզրափակչից:

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՆՎԱՃԵԼ Է ԱՄՆ ԳԱՎԱԹԸ

«Լոս Անջելեսը» նվաճեց ԱՄՆ գավաթը. Եզրափակչում Ֆրանսիայի հավաքականի նախկին հարձակվողի նոր թիմը հաղթեց «Կանզաս Սիթիին» 3-1 հաշվով:

Օլիվիեն բացեց հանդիպման հաշիվը, սակայն մրցակիցներին հաջողվեց հավասարեցնել այն: Ի վերջո, հաղթանակը ձեռք բերվեց ավելացված ժամանակում երկու գոլի շնորհիվ:

«Լոս Անջելեսն» իր պատմության մեջ առաջին անգամ նվաճեց ԱՄՆ գավաթը:

«Ես իսկապես հպարտ եմ թիմով: Ես եկել եմ այստեղ եզրափակիչներում խաղալու եւ գավաթներ նվաճելու համար»,- ասել է Ժիրուն, ում խոսքերն է մեջբերում The Guardian-ը:

«Գավաթը շատ բան է նշանակում ակումբի համար, եւ մենք տոնեցինք երկրպագուների հետ, քանի որ նրանք արժանի էին դրան: Սա մեզ խթան կհանդիսանա մրցաշրջանի վերջին հատվածից առաջ»,- ասել է դարպասապահ Ուգո Լյորիսը:

UFC–Ի ՄԱՐՏԻԿ

UFC-ի ամերիկացի մարտիկ Մեթ Ֆրեվոլը խոսել է փրոմոուշենի թեթեւ քաշային կարգի դասակարգման աղյուսակի առաջատար Արման Ծառուկյանի ու չեմպիոնական գոտու տիրակալ Իսլամ Մախաչեւի միջեւ հնարավոր ռեւանշ մենամարտի մասին:

«Նրանց առաջին մենամարտը խելագարություն էր: Արմանն այն ժամանակ շատ երիտասարդ էր: Կարծում եմ՝ ռեւանշը շատ հետաքրքիր է անցնելու: Այժմ Ծառուկյանը բոլոր շանսերն ունի հաղթանակ տանելու համար: Ամեն դեպքում, Իսլամը շարունակում է մնալ մոլորակի լավագույն մարտիկներից մեկը»,- 34-ամյա մարզիկի խոսքերը մեջբերում է Home of Fight-ը:

● *Հոկտեմբերի 28-ին՝ ժամը 12:00-ին, Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում կցուցադրվի «Մոխրոտը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչն է հիմք հանդիսանում հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելու համար:

Լիլիթ Մկրտչյան (42 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հիվանդներին անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր նշանակելիս հիմք է ընդունվում ամբուլատոր քարտում առկա ախտորոշումը կամ հիվանդանոցային կազմակերպության կողմից տրված հիվանդության պատմությունից գրված քաղվածքը (էպիկրիզը):

Ելնելով հիվանդությունից, եթե հիվանդին բժշկի ցուցումով նշանակվել է հիմնական դեղերի ցանկում չընդգրկված դեղ, ապա ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի եզրակացության հիման վրա հիվանդին դուրս է գրվում դեղ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2008 թվականի հուլիսի 7-ի N 11-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի (ռեեստրի)» ցանկից:

ՀՀ առողջապահության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող դեղերի դեղատոմսերը դուրս են գրվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետությունում կիրառվող դեղատոմսային ձեւաթղթերը հաստատելու մասին» N 759 որոշման եւ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղատոմսի դուրսգրման եւ դեղերի բաց թողնման կարգի» N 100 հրամանի պահանջներին համապատասխան:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ե՞րբ կարող է ուսուցիչը դիմել տարակարգ ստանալու համար:

Աշոտ Ալավերդյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ««Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» 2022 թ. փետրվարի 9-ի ՀՕ-35-Ն օրենքը ուժի մեջ է մտել 2022 թ. մարտի 3-ից, որով սահմանվել են փոփոխություններ նաեւ ուսուցիչների տարակարգի շնորհման գործընթացում:

Համաձայն վերոգրյալ օրենքի պահանջների՝ մարտի 3-ից սկսած՝ տարակարգի շնորհման գործընթացը կիրականացվի կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից օրենքով սահմանված ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունելուց հետո, որով կսահմանվեն տարակարգի շնորհման համար ուսուցչի մասնագիտական չափանիշները:

ՀՀ ԿԳՄՄՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անհրաժեշտ է տարակարգի շնորհման համար դիմում ներկայացնել ենթաօրենսդրական իրավական ակտի ընդունումից հետո:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Արդեն այսօր Մայր աթոռ սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռամբ տեղի կունենա սրբալույս մյուռոնի օրհնությունը

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+3 + 8 +18 + 23
Կոտայքի լեռներ	+4 + 7 +18 + 21
Կոտայքի նախալեռներ	+11 + 13 +22 + 24
Գեղարքունիք	+4 + 8 +17 + 20
Լոռի	+6 + 10 +18 + 21
Տավուշ	+ 8 + 13 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 4 + 7 +17 + 20
Արագածոտնի նախալեռներ	+ 10+ 14 +21 + 25

Արարատ	+ 13 + 15 +25 + 27
Արմավիր	+ 12 + 14 +25 + 27
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 8 +17 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+ 13 + 15 +25 + 27
Սյունիքի հովիտներ	+ 16 + 18 +23 + 26
Սյունիքի նախալեռներ	+ 8 + 11 +19 + 21
ԼՂՀ	+ 8 + 10 +17 + 19
Երեւան	+ 18 + 20 + 23 + 25

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.9.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*